«ՊիՎիԷմ»
Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, 0051, Մամիկոնյանց 47/6, հեռ. (011) 63-33-10

«12» ապրիլի 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 24/006/3-ԳՆ

XTT31630070009315 նույնականացման համարով UAZ 3163 մակնիշի մարդատար ավտոմեքենայի շուկայական արժեքի գնահատման

Պատվիրատու՝ Արարատի համայնքապետարան
Կատարող՝ «ՊիՎիԷմ» ՍՊԸ

Հաստատում եմ
Տնօրեն՝ Տ. Տեր-Հարությունով

-2024 -

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Արարատի համայնքապետարանի և «ՊիՎիԷմ» ՍՊԸ-ի միջև 13.03.2024թ. կնքված Ծառայությունների մատուցման թիվ ԱՄԱՀ-ՄԱԾՁԲ-24/22 պայմանագրի XTT31630070009315 նույնականացման համարով UAZ 3163 մակնիշի մարդատար ավտոմեքենայի շուկայական արժեքը 12.04.2024թ. դրությամբ կազմում է՝

650,000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գնահատող՝ ***Տ. Տեր-Հարությունով***

Տնօրեն՝ ***Տ. Տեր-Հարությունով***

Գնահատող՝ _____ *Տ. Տեր-Հարությունով*

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն,որ <<ՎԱՌՎԱՀ>>ՍՊԸ-Ի ՀՎՀՀ 0411761 կողմից 5 4 2024թ-ին կատարվել է զննում Արարատի համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող UAZ3163 մակնիշի 018CM61 պետհամարանիշի ավտոմեքենայի,որի արդյունքում ի հայտ են եկել հետևյալ թերությունները՝

փ/տ-ի վերանորոգում	-85000
մեղմացուցիչների փոխարինում	-55000
առջևի բաժանարարի տուփի վերանորոգում	-60000
շարժիչի վերանորոգում	-200000
ընթացային մասերի վերանորոգում	-180000

Ընդհանուր նորոգման գումարային հանրագումարը կազմում է 580000 հինգ հարյուր ութսուն հազար /ՀՀ դրամ:

<<ՎԱՌՎԱՀ>> ՍՊԸ Տնօրեն՝ Վ.Մկրտչյան

«ՎԱՌՎԱՀ»
"ВАРВАГ"
"VARVAH"
04111761

Գնահատման իրականացման հիմքերը

Գնահատումն իրականացվել է Արարատի համայնքապետարան-ի և «ՊիՎիԷմ» ՍՊԸ-ի միջև 13.03.2024թ-ին կնքված թիվ ԱՄԱՀ-ՄԱԾՁԲ-24/22 պայմանագրի և 13.03.2024թ-ի Արարատի համայնքապետարան-ի գնահատման առաջադրանքի համաձայն:

Գնահատումն իրականացնող կազմակերպության տվյալները

Անվանումը	«ՊիՎիԷմ» ՍՊԸ
Գտնվելու վայրը	ք. Երևան, Մամիկոնյանց 47/6
Տնօրեն	Տ. Տեր-Հարությունով

Պատվիրատուի տվյալները

Անվանումը	Արարատի համայնքապետարան

Գնահատող մասնագետ

Տիգրան Տեր-Հարությունով (այսուհետ՝ գնահատող)

Սույն գնահատությունն իրականացնողն ունի բարձրագույն տնտեսագիտական կրթություն և 20.06.2023թ-ին «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով անցել է որակավորման քննություն և ստացել անշարժ գույքի գնահատողի մասնագիտական որակավորում (Գնահատողի որակավորման վկայական № ԳԳ-2023-35) :

Գնահատվող օբյեկտը

Գնահատման ենթակա է XTT31630070009315 նույնականացման համարով UAZ 3163 տրանսպորտային միջոցը, որի նկարագրությունը բերված է Աղյուսակ 1-ում (այսուհետ՝ տեքստում նաև շարժական գույք):

Գնահատվող օբյեկտի նկատմամբ առկա գույքային իրավունքները և սահմանափակումները

Վերոհիշյալ շարժական գույքի նկատմամբ գրանցված է ՀՀ Արարատի մարզ «Արարատի համայնք ԿՀ»-ի սեփականության իրավունքը համաձայն տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի:

Գնահատման ամսաթիվը

Շարժական գույքի գնահատությունն իրականացվել է և ճիշտ է 12.04.2024թ-ի դրությամբ: Որոշված արժեքը այլ ամսաթվի դրությամբ կարող է չհամապատասխանել իրականությանը՝ կապված շուկայի փոփոխություններով:

Գնահատման նպատակը (գործառույթը)

Գնահատումը կատարվել է շարժական գույքի շուկայական արժեքը որոշելու նպատակով: Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի հետագայում օտարման համար:

Հաշվետվության կազմման ամսաթիվը և հերթական համարը

Սույն հաշվետվության հերթական համարն է թիվ 24/006/3-ԳՆ: Հաշվետվությունը կազմվել է 12.04.2024թ-ին, բաղկացած է 14 էջից : Տեղազննումը իրականացվել է 15.03.2024թ-ին:

Գնահատման առաջադրանքը

Գնահատումը կատարվել է գնահատման Պատվիրատուի 13.03.2024թ-ի առաջադրանքով, որը հետևյալն է. հետագայում օտարելու նպատակով գնահատել XTT31630070009315 նույնականացման համարով UAZ 3163 տրանսպորտային միջոցը և որոշել նշված շարժական գույքի շուկայական արժեքը:

Որոշվող արժեքի տեսակը

Սույն գնահատմամբ որոշվել է ՀՀ-ում գնահատման ստանդարտներով հաստատված շարժական գույքի շուկայական արժեքը:

Շուկայական արժեք. հաշվարկային դրամական մեծություն է, որով հավանաբար կիրականացվեր, գնահատման ամսաթվի դրությամբ, շահագրգիռ կողմերի միջև, բաց և մրցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում, որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն և առանց հարկադրանքի:

Գնահատման աշխատանքների ընթացակարգը

Գնահատման աշխատանքների ընթացակարգը իր մեջ ներառել է հետևյալ հիմնական փուլերը՝

- գնահատվող օբյեկտի փաստաթղթերի հավաքագրում և ուսումնասիրություն, պատվերի ընդունում,
- գնահատման առաջադրանքի ձևակերպում և պայմանագրի կնքում
- գնահատվող օբյեկտի տեղազննում (լուսանկարում) (կախված գնահատվող օբյեկտի տեսակից),
- գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն,
- գնահատման համապատասխան սկզբունքների, մոտեցումների և մեթոդների ընտրություն,
- գնահատում՝ ընտրված մոտեցման (կամ մոտեցումների) կիրառմամբ,
- վերջնական արդյունքի հաշվարկման նպատակով տարբեր մոտեցումներով հաշվարկված արդյունքների համադրում,
- հաշվետվության կազմում և տրամադրում:

Շարժական գույքի շուկայական արժեքի որոշման մոտեցումները

Շուկայական արժեքի որոշման համար կիրառվում են երեք մոտեցումներ՝ ծախսային, համեմատական և եկամտային :

Համեմատական մոտեցման կիրառման դեպքում արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտը նույնական կամ համադրելի (նմանատիպ) օբյեկտների հետ համեմատելով, որոնց համար առկա է գների վերաբերյալ տեղեկատվություն: Համեմատական մոտեցումը պետք է կիրառվի և զգալի կշիռ ունենա հետևյալ հանգամանքներում՝

- գնահատվող օբյեկտը մոտակա ժամանակահատվածում վաճառվել է գործարքի արդյունքում,
- գնահատվող օբյեկտը կամ համադրելի օբյեկտներն ակտիվորեն շրջանառվում են (առաջարկվում են) շուկայում,
- առկա են հաճախ կատարվող կամ վերջերս նկատվող գործարքներ համադրելի օբյեկտների հետ կապված:

Եկամտային մոտեցումը տրամադրում է արժեքի ցուցիչ՝ ապագա դրամական հոսքերը փոխակերպելով ընդհանուր ընթացիկ արժեքի: Եկամտային մոտեցմամբ արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտի եկամտաբերությամբ, դրամական հոսքի կամ ծախսերի խնայողությունների արժեքի հիման վրա: Եկամտային մոտեցումը պետք է կիրառվի և զգալի կշիռ ստանա հետևյալ հանգամանքներում՝

- ներդրողի տեսանկյունից գնահատվող օբյեկտի եկամտաբերությունը հանդիսանում է արժեքի վրա ազդող կարևոր գործոն,
- գնահատվող օբյեկտի համար առկա են սպասվելիք եկամտի և ժամկետների ողջամիտ կանխատեսումներ,
- միևնույն ժամանակ, շուկայում առկա է համադրելի օբյեկտների ոչ մեծ քանակություն վերլուծության համար:
- Սույն գնահատմամբ գնահատման եկամտային մեթոդը չի կիրառվել, քանի որ գնահատողին գնահատվող շարժական գույքի վարձակալության արժեքի որոշման համար անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն ձեռք բերել չի հաջողվել:

Գնահատող՝ _____ *Տ. Տեր-Հարությունով*

Գնահատման ծախսային մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, ըստ որի գնորդը գնահատվող օբյեկտի համար չի վճարի ավելին, քան հավասար օգտակարությամբ օբյեկտ ձեռք բերելու դեպքում, լինի դա գնման կամ կառուցման միջոցով, գործընթացը բարդացնող գործոնների բացակայությամբ՝ անհարկի ժամանակ, անհարմարություն, ռիսկ կամ այլ գործոններ: Այս մոտեցումը հնարավոր է դարձնում ստանալ արժեք օբյեկտի արժեքը փոխարինման կամ վերարտադրման ընթացիկ ծախսերի որոշման միջոցով և ֆիզիկական մաշվածության բոլոր տեսակների կիրառմամբ: Ծախսային մոտեցումը պետք է կիրառվի և նշանակալի կշիռ ստանա հետևյալ հանգամանքներում.

- մասնակիցները կկարողանան վերարտադրել օբյեկտը գրեթե նույն օգտակարությամբ, ինչպես գնահատվող օբյեկտը, առանց որևէ նորմատիվ կամ իրավական սահմանափակումների, և այդ օբյեկտը կարող է այնքան արագ վերարտադրվել, որ մասնակիցը չուզենա գնահատվող օբյեկտի անհապաղ օգտագործման հնարավորության համար հավելյալ վճարել,
- գնահատվող օբյեկտն ուղղակիորեն եկամուտ չի բերում, իսկ դրա առանձնահատուկ բնույթը թույլ չի տալիս եկամտային կամ համեմատական մոտեցումների կիրառումը,
- օգտագործվող արժեքի տեսակը հիմնականում հիմնված է փոխարինման կամ վերարտադրման ծախսերի վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնահատվող մեքենան բավական մաշված է նրա վերականգնողական ծախսերի հաշվարկի համար մենք չունենք հավաստի տվյալներ, ինչպես նաև չենք կարող հաշվել նրա ֆիզիկական, բարոյական և տնտեսական մաշվածքներերի ծավալները, այդ /հաշվարկի բարդության պատճառով/, ուստի գնահատման ծախսային մեոտեցման կիրառումը այդ սահմանափակումների պայմաններում, մեր կարծիքով, իրատեսական արդյունքներ չի ունենա: Հիմք ընդունելով վերոհիշյալը, ծախսային մոտեցման կիրառումը գնահատման ներկայացված գույքի շուկայական արժեքը հաշվարկելու համար հիմնավորված չէ:

Շարժական գույքի գնահատման մեթոդները

Գնահատման ժամանակ կիրառվող հիմնական մեթոդներն են.

Համադրելի գործարքների մեթոդը, որը նաև հայտնի է որպես կողմնորոշիչ գործարքների մեթոդ, արժեքը որոշելունպատակով օգտագործվում է նույնական կամ համադրելի օբյեկտների հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

1) Երբ դիտարկվող համադրելի գործարքները ներառում են գնահատվող օբյեկտը, այս մեթոդը կոչվում է նախնական
գործարքների մեթոդ:

2) Համադրելի գործարքների կիրառման ժամանակ կարելի է օգտվել գնահատման օբյեկտի գնագոյացման ցուցանիշների համեմատական վերլուծության ամենատարբեր արդյունքներից, հայտնի նաև որպես «համեմատության միավորներ», որոնք համեմատություն անցկացնելու համար հիմք են ծառայում:

3) Համեմատության միավորները, որոնք օգտագործվում են մասնակիցների կողմից, կարող են տարբերվել՝ կախված օբյեկտների տեսակներից, ինչպես նաև տարբեր ոլորտներից և տարածաշրջաններից:

4) Համադրելի գործարքների մեթոդի հիմնական փուլերն են՝ որոշել համեմատության միավորները, որոնք օգտագործվում են համապատասխան շուկայի մասնակիցների կողմից

Համանման հանրային ընկերությունների համեմատական մեթոդով գնահատման նպատակով օգտագործվում են հրապարակայնորեն վաճառվող համեմատելի ընկերությունների մասին տեղեկությունները, որոնք նույնական են կամ համադրելի գնահատվող ընկերությանը:

Այս մեթոդը նման է համադրելի գործարքների մեթոդին. սակայն կան որոշ տարբերություններ, որոնք պայմանավորված են համադրելի ընկերությունների հանրային շուկայում վաճառքով, ինչպիսիք են՝

- գնահատման և համադրելի ցուցանիշները հասանելի են գնահատման ամսաթվի դրությամբ,
- համադրելի ցուցանիշների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է հանրային փաստաթղթերում,
- բաց հրապարակային փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունը պատրաստվել է հաշվապահական հաշվառման հայտնի ստանդարտներին համապատասխան:
- 9) Մեթոդը պետք է օգտագործվի միայն այն դեպքում, եթե գնահատվող օբյեկտն առավել նման է հրապարակայնորեն վաճառվող համադրելի օբյեկտներին, լիարժեք համեմատություն ապահովելու համար:
- 10) Հանրային համանման գնահատվող օբյեկտների համեմատական մեթոդի օգտագործման հիմնական փուլերն են՝
- համապատասխան շուկայի մասնակիցների կողմից օգտագործվող գնահատման տեսակարար ցուցանիշների համադրելի ապացույցների սահմանում,
- թիրախային հրապարակայնորեն վաճառվող անալոգային օբյեկտների ընտրություն և այդպիսի հաստատված հիմնական ցուցանիշների հաշվարկ (այսինքն՝ մուլտիպլիկատորներ) նրանց հետ գործարքներում,
- գնահատվող օբյեկտի և շուկայում վաճառվող համադրելի օբյեկտների միջև որակական և քանակական նմանությունների և տարբերությունների հետևողական համեմատական վերլուծության անցկացում,
- անհրաժեշտության դեպքում, գնահատման հաշվարկված ցուցանիշների ճշգրտում՝ հաշվի առնելով դիտարկվող օբյեկտի և հրապարակայնորեն վաճառվող անալոգային օբյեկտների միջև տարբերությունները,
- գնահատվող օբյեկտի նկատմամբ ճշգրտված գնահատման ցուցանիշների կիրառում, եթե օգտագործվել են գնահատման մի քանի ցուցանիշներ, ապա հաշվարկվում է յուրաքանչյուր ստացված արդյունքի կշիռը:

Դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի (ԴՀԴ) համաձայն կանխատեսվող դրամական հոսքը դիսկոնտավորվում է հակառակ ուղղությամբ (ապագայից և) մինչ գնահատման ամսաթիվը, որն արդյունքում թույլ է տալիս ստանալ գնահատվող օբյեկտի ընթացիկ արժեքը:

Սույն գնահատմամբ գնահատման եկամտային մեթոդը չի կիրառվել՝ գնահատողին գնահատվող շարժական գույքի վարձակալության արժեքի որոշման համար անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն ձեռք բերել չի հաջողվել, ինչպես նաև բաց և մրցակցային շուկայում առաջարկվող նմանատիպ համեմատական տվյալների անհրաժեշտ և բավարար քանակության, վերջիններիս համեմատությամբ շուկայական արժեքի ճշգրիտ ստացման հիմնավորմամբ:

Գնահատվող տրանսպորտային միջոցի տեխնիկական նկարագիրը

Աղյուսակ 1

Ամփոփ տվյալներ	
Ավտոմեքենայի մակնիշը	UAZ
Տիպարը	3163
Թափքի տեսակը	Ունիվերսալ
Ավտոմեքենայի տեսակը	Թեթև մարդատար
Թողարկման տարեթիվը	2007թ.
Պետ.համարանիշը	018 CM 61
Գույնը	Արծաթափայլ
Նույնականացման համար	XTT31630070009315
Շարժիչի հզորությունը	60/81
Պետ.հաշվառման վկայագիր	XF 875094, գրանցված 23.09.2022թ.
Տերը	ՀՀ Արարատի մարզ «Արարատի համայնք ԿՀ»
Ընթացիկ վիճակը	Շահագործվում է
Շարժիչի տեսակը	Տեղադրված է գազ
Անվադողի վիճակը	Շուրջ 80%
Ղեկը	Ձախ
Փոխանցման տուփ	Մեխանիկական
Վազքը /կմ/	Շուրջ 504000
Տեխնիկական հագեցվածությունը և ֆիզկական վիճակը	Սրահը՝ կտորե, մաշված: Մեքենան ունի արտաքին քերծվածքներմ վնասվածքներ: Ֆիզիկական վիճակը՝ բավարար:
Տեխնիկական հագեցվածություն	Համաձայն ներկայացված վիճակի վերաբերյալ տեղեկանքի առկա է 580.000 ՀՀ դրամի վերանորոգման ծախս /Հաշվետվությանը կից/:

Շուկայական արժեքի որոշում համեմատական մոտեցմամբ

Համեմատական մոտեցումը կիրառվում է գնահատվող շարժական գույքին նմանատիպ շարժական գույքի առուվաճառքի գործարքների մասին արժանահավատ շուկայական տեղեկատվության բավարար (առնվազն երեք միավոր) քանակության առկայության դեպքում: Կարող են օգտագործվել նաև ազատ շուկայում հրապարակայնորեն վաճառվող շարժական գույքի առաջարկի արժեքները:

Այս մոտեցման կիրառման ընթացքում իրականացվել է համանման շարժական գույքի համար շուկայական իրավիճակի վերլուծություն և վերլուծության համար արժանահավատ տեղեկատվության ընտրություն, համեմատության անհրաժեշտ տարրերի առանձնացում, համեմատվող շարժական գույքի համար արժեքի մի քանի ճշգրտված ցուցանիշների համապատասխանեցումը մեկ ցուցանիշին:

Գնահատման գործընթացում ընդունված են համեմատության 4 հիմնական տարրեր՝

- վաճառքի պայմանները և շուկայի իրավիճակը,

Գնահատող՝ _____ *Տ. Տեր-Հարությունով*

- գույքային իրավունքներն ու սահմանափակումները (այդ թվում՝ իրավունքների և օգտագործման նկատմամբ),
- տեխնիկական տարրերը,
- լրացուցիչ գործոնները:

Գնահատողն օգտվել է շարժական գույքի շուկայում առաջարկվող մեքենաների վաճառքի տվյալներից: Համեմատական շարժական գույքերի վերաբերյալ տվյալները ձեռք են բերվել, www.auto.am, www.list.am, www.avito.ru, www.mobile.de և այլ ինտերնետային կայքերից, ինչպես նաև գնահատողի տվյալների սեփական բազայից: Համեմատական շարժական գույքերի տվյալները բերված են աղյուսակ 2-ում: Համեմատական շարժական գույքերի վերաբերյալ բերված տվյալները ճշգրտվել են հարցումների և տեղազննության միջոցով: Որպես համեմատության տարրեր ընտրվել են շարժական գույքի շուկայական արժեքի վրա ազդող հիմնական գործոնները:

Աղյուսակ 2

Համեմատության միավոր	**Չափման միավոր**	**Գնահատվող ավտոմեքենա**	**Համեմատական ավտոմեքենա N 1**	**Համեմատական ավտոմեքենա N 2**	**Համեմատական ավտոմեքենա N 3**
Ավտոմեքենայի մակնիշը		UAZ 3163	UAZ 3163	UAZ 3163	UAZ 3163
Տեղեկատվության աղբյուր			https://www.list.am/item/17495075	https://www.list.am/item/19738149	https://www.list.am/item/19699999
Վաճառքի կամ առաջարկի ժամանակը			առաջ. 03.2024թ. դրութ	առաջ. 03.2024թ. դրութ	առաջ. 03.2024թ. դրութ
Առաջարկի գինը			2113250	1975000	2251500
Ուղղումը	%		-10%	-10%	-10%
Ուղղումը	ՀՀ դրամ		-211325	-197500	-225150
Ուղղված գինը	ՀՀ դրամ		1901925	1777500	2026350
Գույքային իրավունքները		*սեփականություն*	*սեփականություն*	*սեփականություն*	*սեփականություն*
Ուղղումը	%		0%	0%	0%
Ուղղումը	ՀՀ դրամ		0	0	0
Ուղղված գինը	ՀՀ դրամ		1901925	1777500	2026350
Արտադրության տարեթիվը		*2007թ.*	*2007թ.*	*2007թ.*	*2007թ.*
Ուղղումը	%		0%	0%	0%
Ուղղումը	ՀՀ դրամ		0	0	0
Ուղղված գինը	ՀՀ դրամ		1901925	1777500	2026350
ՏՄ տեսակը		*Թեթև մարդատար*	*Թեթև մարդատար*	*Թեթև մարդատար*	*Թեթև մարդատար*
Ուղղումը	%		0%	0%	0%
Ուղղումը	ՀՀ դրամ		0	0	0
Ուղղված գինը	ՀՀ դրամ		1901925	1777500	2026350
Գազի բալոնի առկայությունը		Ունի	Ունի	Ունի	Ունի

Գնահատող՝ _____ *Տ. Տեր-Հարությունով*

Ուղղումը	*%*		0%	0%	0%
Ուղղումը	*ՀՀ դրամ*		0	0	0
Ուղղված գինը	*ՀՀ դրամ*		1901925	1777500	2026350
Անվադողերի մաշվածության աստիճանը		Շուրջ 80%	Շուրջ 50%	Շուրջ 50%	Շուրջ 50%
Ուղղումը	*%*		-5%	-5%	-5%
Ուղղումը	*ՀՀ դրամ*		-95096	-88875	-101318
Ուղղված գինը	*ՀՀ դրամ*		1806829	1688625	1925033
Վազքը		*504000*	100000	145000	198000
Ուղղումը	*%*		-20%	-15%	-10%
Ուղղումը	*ՀՀ դրամ*		-361366	-253294	-192503
Ուղղված գինը	*ՀՀ դրամ*		1445463	1435331	1732529
Փոխանցման տուփ		Մեխանիկական	Մեխանիկական	Մեխանիկական	Մեխանիկական
Ուղղումը	*%*		0%	0%	0%
Ուղղումը	*ՀՀ դրամ*		0	0	0
Ուղղված գինը	*ՀՀ դրամ*		1445463	1435331	1732529
Ֆիզիկական վիճակի ուղղում		Բավարար	Լավ	Լավ	Լավ
Ուղղումը	*%*		-20%	-20%	-20%
Ուղղումը	*ՀՀ դրամ*		-289093	-287066	-346506
Ուղղված գինը	*ՀՀ դրամ*		1156370	1148265	1386023
Ավտոմեքենայի արժեքը	***դրամ***	***1230220***			
Ավտոմեքենայի արժեքը կլորացված	***դրամ***	**1230000**			

Հաշվի առնելով պատվիրատուի կողմից ներկայացված Տեղեկանքը տրանսպորտային միջոցի թաքնված թերությունների վիճակի վերաբերյալ իրականացվում է համապատասխան ուղղում.

1 230 000 - 580 000 = 650 000 ՀՀ դրամ:

*Մեքենայի հավանական շուկայական արժեքը կարող է կազմել **650,000 (վեց հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ:*

Ընդհանրացնելով հետազոտությունների արդյունքները գնահատողը հանգում է հետևյալ հետևության.

Գնահատող՝ _____ Տ. Տեր-Հարությունով

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆ

Գնահատմանը ներկայացված XTT31630070009315 նույնականացման համարով UAZ 3163 մակնիշի մարդատար ավտոմեքենայի շուկայական արժեքը 12.04.2024թ. դրությամբ կազմում է՝

650,000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Հատուկ պայմաններ

Այս պայմանները հանդիսանում են սույն հաշվետվության անքակտելի մասը:

1. Սույն հաշվետվությունը վավեր է միայն ամբողջությամբ ներկայացված և միայն նշված նպատակի համաձայն:
2. Գնահատման համար տրամադրված և հաշվետվության մեջ արտացոլված տեղեկությունները համարվում են հավաստի, սակայն գնահատողը չի կարող երաշխավորել վերոհիշյալ ինֆորմացիայի բացարձակ ճշտությունը:
3. Գնահատողը գործել է որպես անկախ կատարող:
4. Գնահատվող առարկայի վերաբերյալ գնահատողի կարծիքը վավեր է միայն գնահատման օրվա դրությամբ:
5. Գնահատողի կողմից կատարված ուսումնասիրությունները և եզրակացությունները ամբողջությամբ անկանխակալ են:
6. Գնահատողը պարտավորվում է պահպանել գնահատման ընթացքում պատվիրատուի կողմից կամ հաշվարկների միջոցով ստացված ինֆորմացիայի գաղտնիությունը
7. Գնահատողի կողմից կատարված աշխատանքի արդյունքների իսկությունը հիմնված է նրա աշխատանքային փորձի և մատչելի տեղեկատվության վրա:
8. Գնահատողը ենթադրում է, որ չկան որևէ թաքնված փաստեր, որոնք կազդեին գնահատման արդյունքի վրա: Գնահատողը պատասխանատվություն չի կրում նմանատիպ թաքնված փաստերի առկայության կամ բացակայության համար:
9. Սույն գնահատման հաշվետվությունը պարունակում է գնահատողի մասնագիտական կարծիքը գնահատվող առարկայի վերաբերյալ:

Օգտագործված ինֆորմացիոն աղբյուրներ և գրականության ցանկ

1. Տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր,
2. ՀՀ օրենսդրություն «Գնահատման գործունեության մասին օրենք»,
3. ՀՀ Գնահատման ստանդարտ:

Գնահատող՝ _____ *Տ. Տեր-Հարությունով*

Լուսանկարչական Հավելված









Գնահատող՝ _____ Տ. Տեր-Հարությունով






Գնահատող՝ _____ Տ. Տեր-Հարությունով





Գնահատող՝ _____ Տ. Տեր-Հարությունով

Համեմատականների Հավելված

UAZ (УАЗ) Patriot, 2.3 լ, լիաքարշ, 2007 թ., գազ

Այունիք · Սիսիան

$5,350



UAZ (УАЗ) Patriot, 2.7 լ, լիաքարշ, 2007 թ.

Արարատ · Գալիշ

$5,000

UAZ (УАЗ) Patriot, 2.7 լ, լիաքարշ, 2007 թ., գազ

Լոռի · Հարթագոտ

$5,700

Գնահատող՝ _____ Տ. Տեր-Հարությունով

ՎԿԱՅԱԿԱՆ N ԳԳ-2023-35

Սույն վկայականը տրվում է

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹԻ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԻՆ

(անունը, հայրանունը, ազգանունը)

առ այն, որ նա մասնակցել է
Կադաստրի կոմիտեի կողմից
կազմակերպված
գնահատման գործունեության
որակավորման քննության:
Կադաստրի կոմիտեի ղեկավարի
2023 թվականի հունիսի 20-ի N278-L
հրամանի համաձայն տրամադրվել է

ԳՆԱՀԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Գործողության ժամկետը մինչև 20 հունիսի 2028 թ.

Կադաստրի
կոմիտեի ղեկավար՝ (ստորագրություն) Սուրեն Թովմասյան
(անունը, ազգանունը)

Կ Տ

20 հունիսի 2023 թ

QR-կոդ (երկչափ շտրիխ կոդ) Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքի միջոցով: